# «ՋիԷնՄի-ԱԼՖԱ» ՓԲԸ

## Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ
## 2013թ. դեկտեմբերի 31-ին
## ավարտված տարվա համար

## Բովանդակություն

| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն | 4 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն | 5 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն | 6 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն | 7 |
| Պատրաստման հիմունքներ | 8 |

KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

**Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

«ՋիԷՆՄի-ԱԼՖԱ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «ՋիԷՆՄի-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի («Ընկերություն») 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2014թ. ապրիլի 30-ի մեր աուդիտորական եզրակացությունում: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այն դեպքերի ազդեցությունը, որոնք տեղի են ունեցել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Եզրակացության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ»* պահանջների համաձայն:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, Ընկերության 31 դեկտեմբերի 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են նշված ֆինանսական հաշվետվություններին՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Էնդրյու Քոքշել
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
7 մայիսի 2014թ.

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

| ազ. դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 10,634,963 | 6,508,588 |
| Ոչ նյութական ակտիվներ | 739,900 | 52,398 |
| Բանկային ավանդներ | - | 888,798 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 347,855 | 228,412 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 320,368 | 566,971 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **12,043,086** | **8,245,167** |
| | | |
| Պաշարներ | 105,245 | 102,132 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 1,326,318 | 784,240 |
| Բանկային ավանդներ | 977,795 | 2,907,994 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | 86,423 | 52,928 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 16,587 | 628,703 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **2,512,368** | **4,475,997** |
| **Ընդամենը ակտիվներ** | **14,555,454** | **12,721,164** |
| | | |
| **Սեփական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 1,000,000 | 1,000,000 |
| Չբաշխված շահույթ | 591,552 | 1,038,649 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **1,591,552** | **2,038,649** |
| | | |
| **Պարտավորություններ** | | |
| Հետաձգված եկամուտ և ստացված կանխավճարներ, ոչ ընթացիկ մաս | 2,394,404 | 2,746,264 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **2,394,404** | **2,746,264** |
| | | |
| Բանկային օվերդրաֆտներ | 255,320 | - |
| Հետաձգված եկամուտ և ստացված կանխավճարներ, ընթացիկ մաս | 357,620 | 396,185 |
| Վարկեր և փոխառություններ | 7,633,410 | 7,269,204 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 2,323,148 | 270,862 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **10,569,498** | **7,936,251** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **12,963,902** | **10,682,515** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **14,555,454** | **12,721,164** |



Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

| հազ. դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| Հասույթ | 2,612,739 | 3,606,976 |
| Ձեռք բերված ինտերնետ տրաֆիկ | (679,231) | (765,085) |
| Ցանցային ենթակառուցվածքների վարձակալություն | (305,527) | (258,123) |
| Վաճառված մուք մանրաթելի ինքնարժեք | (12,563) | (125,621) |
| Փոխկապակցման ծառայությունների գծով ծախսեր | (104,606) | (78,483) |
| Աշխատավարձ և աշխատակիցների այլ հատուցումներ | (483,451) | (323,682) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (831,203) | (447,660) |
| Վերանորոգման և պահպանման ծախսեր | (77,130) | (40,845) |
| Այլ գործառնական ծախսեր | (545,248) | (229,724) |
| Այլ գործառնական եկամուտ | 12,439 | 3,509 |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | **(413,781)** | **1,341,262** |
| Ֆինանսական եկամուտ | 228,829 | 29,058 |
| Ֆինանսական ծախսեր | (381,588) | (99,893) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | **(152,759)** | **(70,835)** |
| **(Վնաս)/շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | **(566,540)** | **1,270,427** |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 119,443 | (256,812) |
| **Ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար** | **(447,097)** | **1,013,615** |

4-ից 8-րդ էջերում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2014թ. մայիսի 7-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Ֆարմանյան
Գլխավոր տնօրեն

Վարդան Կարապետյան
Ֆինանսական տնօրեն



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| **հազ. դրամ** | **Բաժնետիրական կապիտալ** | **Չբաշխված շահույթ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. | 1,000,000 | 25,034 | 1,025,034 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | |
| Շահույթ տարվա համար | - | 1,013,615 | 1,013,615 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **1,013,615** | **1,013,615** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.** | **1,000,000** | **1,038,649** | **2,038,649** |
| | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. | 1,000,000 | 1,038,649 | 2,038,649 |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | | | |
| Վնաս տարվա համար | - | (447,097) | (447,097) |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **-** | **(447,097)** | **(447,097)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **1,000,000** | **591,552** | **1,591,552** |



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

| հազ. դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 2,302,929 | 2,751,168 |
| Մատակարարներին և աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (2,326,495) | (2,097,424) |
| **Դրամական միջոցներ գործառնական գործունեությունից** | **(23,566)** | **653,744** |
| Վճարված տոկոսներ | (371,783) | (73,857) |
| Վճարված շահութահարկ | (35,150) | (435,090) |
| **Գործառնական գործունեության միջոցով (օգտագործված)/ստացված դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(430,499)** | **144,797** |
| | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ստացված տոկոսներ | 113,442 | 10,638 |
| Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից | 12,005 | 3,079 |
| Բանկային ավանդների տեղաբաշխում | - | (3,790,081) |
| Բանկային ավանդների ելքագրում | 2,955,277 | - |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (3,093,972) | (2,811,252) |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (749,608) | (43,947) |
| Մարված փոխառություններ | - | 680 |
| **Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(762,856)** | **(6,630,883)** |
| | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Դրամական հոսքեր փոխառություններից | 650,023 | 11,983,106 |
| Փոխառությունների մարում | (331,779) | (4,891,778) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների զուտ հոսքեր** | **318,244** | **7,091,328** |
| | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | **(875,111)** | **605,242** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 7,675 | (486) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | 628,703 | 23,947 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | **(238,733)** | **628,703** |



Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

## 1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «ՋիԷՆՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի («Ընկերություն») 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2014թ. ապրիլի 30-ին, որոնք պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների 5-ից 8-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի հետևյալ հասցեից՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Աբովյան, Խաղաղության փ. 1: